ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Գործառույթներ.

Բաժնի գլխավոր խորհրդատուն՝

1) Իրականացնում է Արդարադատության նախարարի և ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի հրամանների համաձայն կատարողական վարույթներով ընթացիկ գործունեության տեսչական ստուգում և ծառայողական քննություն.

2) Իրականացնում է կատարողական գործողությունների ընթացքում տարածքային բաժինների կողմից ՀՀ գլխավոր հարկադիր կատարողին ներկայացված զեկուցագրերի կամ Բաժին ներկայացված գրությունների հիմքով որոշակի կատարողական վարույթների ուսումնասիրություն.

3) Իրականացնում է քաղաքացիներից և իրավաբանական անձանցից, պետական մարմիններից ստացված դիմում-բողոքների և այլ գրությունների պատասխան գրությունների պատրաստում.

4) Մասնակցում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի հիմքով ավարտման ենթակա կատարողական վարույթների հիմնավորվածության ուսումնասիրությանը.

5) Մասնակցում է միատեսակ իրավակիրառ պրակտիկայի մեթոդաբանության մշակմանը՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքին, «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան.

6) Կատարում է Բաժնի կանոնադրությամբ սահմանված և (կամ) Բաժնի պետի կողմից իր իրավասության սահմաններում տրված այլ հանձնարարականներ.

7) Որպես փորձաշրջանի համակարգող, Հարկադիր կատարման ծառայությունում առաջին անգամ պաշտոն զբաղեցնող անձին աջակցում է ծրագրով նախատեսված գործառույթների իրականացման հարցում, ծանոթացնում այդ գործառույթների արդյունավետ կատարման եղանակներին, աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ընթացակարգերին:

2. Պաշտոնին ներկայացվող պահանջները.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության տեսչական և վերլուծական բաժնի գլխավոր խորհրդատուի պաշտոնում կարող է նշանակվել այն անձը, որը զբաղեցրել է Ծառայության գլխավոր խմբի պաշտոն կամ առնվազն երկու տարի՝ առաջատար խմբի պաշտոն կամ ունի հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

Պաշտոնին նշանակվելու համար մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 2020թ. հուլիսի 30-ի թիվ 461-Ն որոշմամբ: